ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 47

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30-ը սեպտեմբերի 2020թ.

Առցանց կազմակերպված նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 32-ը:

Նիստն անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն էր Ա. Հ. Մակարյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մակարյանը։

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի՝ 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյան**):
2. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա.Դավթյան**):
3. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի՝ 2020-2025 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգի հաստատում (զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ.Մովսեսյան**):
4. Ներմասնաճյուղային գիտական դրամաշնորհների տրամադրման կարգի հաստատում (զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ.Մովսեսյան**):

5. ԵՊՀ ԻՄ-ի՝ 2021թ. առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում (զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյան**):
6. Ընթացիկ հարցեր.

6.1.ԵՊՀ ԻՄ-ում 2019-2020 ուստարվա լրավճարների տրամադրման մասին:

6.2.ԵՊՀ ԻՄ-ի կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կանոնադրության հաստատում:

Օրակարգի քննարկման ժամանակ եղավ առաջարկ 4-րդ կետի վերաբերյալ. հաշվի առնելով այն փաստը, որ գիտական խորհրդի անդամները, ելնելով ստեղծված իրավիճակից, բավարար չափով չեն կարողացել ուսումնասիրել ներկայացված Ներմասնաճյուղային գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը և այլ բուհերի նմանատիպ գործընթացների օրինակները, չեն արել առաջարկներ փաստաթղթի վերաբերյալ՝ հարցը տեղափոխել հաջորդ նիստի քննարկմանը: Բացի այդ՝ պայմանավորվեցին, որ գիտական քարտուղար Մ.Աթոյանի հարգելի բացակայության պայմաններում օրակարգի 1-ին և 6-րդ հարցերը կներկայացնի Ա.Մակարյանը:

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 47/1

1 Օրակարգի չորրորդ հարցը՝ Ներմասնաճյուղային գիտական դրամաշնորհների տրամադրման կարգի հաստատում (զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի

ղեկավար **Հ.Մովսեյան**), տեղափոխել հաջորդ գիտական խորհրդի նիստ։

2 Հաստատել նիստի օրակարգը առանց չորրորդ հարցի։

<u>Օրակարգի առաջին</u> **՝** «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի՝ 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանի** հաղորդումը։

Նա մանրամասն ներկայացրեց նիստերի ժամանակացույցը՝ տես հավելված 1, նշեց, որ ժամանակացույցը կազմվել է համաձայն ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարության, ԵՊՀ-ի համապատասխան ժամանակացուցով, ընդգրկվել են նաև ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված հարցեր։

Առցանց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

ՈՐՈՇՈՒՄ N 47/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երկրորդ</u> **՝** «2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա.Դավթյանի** հաղորդումը:

Նա ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ հավելված 2, նշեց, որ այն կազմվել է համաձայն ԵՊՀ ԻՄ-ում գործող ընթացակարգերի, քննարկումներին մասնակցել են նաև ԵՊՀ ԻՄ –ում գործող ուսանողական կառույցների ներկայացուցիչները:

Առցանց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

ՈՐՈՇՈՒՄ N 47/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u> **՝** «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի՝ 2020-2025 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ

ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ. Մովսեսյանի** հաղորդումը։

Նա մանրամասն ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի՝ 2020-2025 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգը՝ տես հավելված 3:

Առցանց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

ՈՐՈՇՈՒՄ N 47/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2020-2025թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգը համաձայն հավելված 3-ի։

2 Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի՝ 2021թ. առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանի** հաղորդումը։

Նա մասնավորապես նշեց, որ Մասնաճյուղի ֆակուլտետներում աշխատանքներ են տարվում նոր մասնագիտությունների և կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ, սակայն առկա լիցենզիաների շրջանակներում առաջարկվում է հայտագրել այն ծրագրերը, որոնք նախորդ

տարի հավաքել են առավել մեծ թվով դիմորդներ և հիմա էլ պահանջարկ ունեն հեռակա ուսուցման դիմորդների մոտ: Հնչեց առաջարկ «Հայոց լեզու և գրականություն» առարկայի քննությունը ներառելու պարտադիր քննությունների ցանկում 2 աստղանիշով՝ որպես պարտադիր քննություն «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության ծրագրերում անվճար տեղերի մրցույթի համար, որը փակ քվեարկությամբ մերժվեց:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ 2019-2020 ուստարում ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին գիտահետազոտական գործունեության որոշ տեսակների կատարման համար լրավճարների տրամադրման մասին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանի** հաղորդումը:

Ա.Մակարյանը տեղեկացրեց, որ համապատասխան կարգով նախատեսված է, որ 2020թ. դեկտեմբերին վճարվելու են հավելավճարներ այն հոդվածների համար, որոնք հրապարակվել են 2019թ. սեպտեմբերից մինչև 2020թ. սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում: Որպես տեղեկատվություն նա նշեց, որ այդպիսի աշխատանքների քանակը շատ չէ. Նախնական արդյունքներով Մասնաճյուղի 5 աշխատակից ներկայացրել է 5 աշխատանք: Հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

Լսեցին՝ ԵՊՀ ԻՄ-ի կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կանոնադրության հաստատում հարցի վերաբերյալ Ա. Մակարյանի հաղորդումը:

Ա.Մակարյանը ներկայացրեց Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կանոնադրական նպատակը,

խնդիրները և գործառույթները, պատասխանեց այլ ստորաբաժանուների հետ բաժնի նախատեսվող համագործակցության վերաբերյալ հարցերին:

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

ՈՐՈՇՈՒՄ N 47/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կանոնադրությունը համաձայն հավելված 4-ի:
2 Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ